Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
դեկտեմբերի 15-ի N 1944 - Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2019 թվականի
հոկտեմբերի 24-ի N 1459-Ն որոշման

ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են երեխաներին, տարեցներին և հաշ-մանդամություն ունեցող անձանց (այսուհետ՝ շահառու) ծառայություններ տրա-մադրելու նպատակով պետական վկայագիր հատկացնելու հետ կապված հարա-բերությունները:

2. Յուրաքանչյուր շահառուի, իր գնահատված յուրաքանչյուր սոցիալական կարիքին համարժեք սոցիալական ծառայություն տրամադրելու նպատակով, հատկացվում է մեկ պետական վկայագիր:

3. Պետական վկայագրի հիման վրա շահառուին ծառայությունները տրա-մադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշման համաձայն հավաստագրված՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից (այսուհետ՝ կազմակերպություն)՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից:

4. Պետական վկայագրի հիման վրա կազմակերպությունը խնամք է տրա-մադրում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպ-տեմբերի 25-ի N 1112-Ն և 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1744-Ն որոշումներով սահմանված կարգով:

5. Պետական վկայագիրը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:

II. ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. Պետական վկայագիրը ծառայության կարիք ունեցող երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կամ Միասնական սոցիալական ծառայության՝ քաղաքացու բնակության վայրն սպասարկող տարածքային կենտրոնի (այսուհետ՝ տարածքային կենտրոն) կողմից:

7. Ծառայությունից օգտվելու նպատակով պետական վկայագիր ստանալու համար շահառուն կամ նրա օրինական ներկայացուցիչն անձամբ կամ փոստային կապի միջոցով կամ առցանց (էլեկտրոնային) եղանակով դիմում է՝

1) երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրելու դեպքերում՝ նախարարություն, որը պետական վկայագիրը տրամադրում է Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) կողմից տրված՝ երեխային շուրջօրյա խնամք տրամադրելու վերաբերյալ եզրակացության հիման վրա.

2) երեխաներին ցերեկային խնամք, տարեցներին և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամք (շուրջօրյա, տնային պայմաններում) տրամադրելու դեպքերում՝ տարածքային կենտրոն:

8. Շահառուի (կամ նրա օրինական ներկայացուցչի) դիմումը սույն կարգի 7-րդ կետում նշված ձևով ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում շահառուին տրամադրվում է պետական վկայագիր՝

1) երեխաների շուրջօրյա խնամքի պարագայում պետական վկայագիրը տրամադրում է նախարարությունը՝ հիմք ընդունելով մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) կողմից տրված՝ երեխային շուրջօրյա խնամք տրամադրելու վերաբերյալ եզրակացությունը.

2) երեխաներին ցերեկային խնամք, իսկ տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա և տնային պայմաններում խնամք տրամադրելու պարագայում պետական վկայագիրը տրամադրում է տարածքային կենտրոնը՝ սահմանված կարգով իրականացված կարիքի գնահատման եզրակացության հիման վրա, ինչի մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է նախարարությանը:

9. Պետական վկայագրի գործողության ժամկետը սահմանվում է մեկ տարի՝ սկսած պետական վկայագիրը տալու օրվանից:

10. Հիմք ընդունելով պետական վկայագրով շահառուներին ծառայություններ տրամադրող կազմակերպության դիմումը՝ նախարարությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպության հետ կնքում է պետական վկայագրում նշված ծառայությունների պատվիրակման պայմանագիր:

11. Սույն կարգի 10-րդ կետում նշված պայմանագիրը կնքելուց հետո տվյալ կազմակերպությունը գրանցվում է պետական վկայագրով ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ցանկում (այսուհետ՝ ցանկ), որը հրապարակվում է նախարարության պաշտոնական կայքէջում: Կազմակերպությունների ցանկը կարող է փոփոխվել կնքված պայմանագրերի լուծման կամ նոր կազմակերպությունների՝ ցանկում ընդգրկման դեպքում: Ցանկում ներառված կազմակերպությունը ցանկացած ժամանակ կարող է դուրս գալ ցանկից՝ իր դիմումի համաձայն կամ պայմանագրի լուծման դեպքում:

12. Պետական վկայագրի հետ մեկտեղ շահառուին տրամադրվում է սույն կարգի 11-րդ կետում նշված ցանկը: Շահառուն կամ նրա օրինական ներկայացուցիչը, ստանալով պետական վկայագիր, իրեն տրամադրված ցանկից ընտրում է անհրաժեշտ ծառայություն մատուցող կազմակերպություն և ներկայանում համապատասխան ծառայությունն ստանալու համար:

13. Կազմակերպությունը շահառուին տրամադրում է պետական վկայագրում նշված ծառայությունը՝ որոշմամբ սահմանված կարգին և չափորոշիչներին համապատասխան:

14. Յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 10-ը տրամադրված ծառայությունների դիմաց վճարում կատարելու նպատակով կազմակերպությունը նախարարություն է ներկայացնում հաշվետվություն՝ ՄՄԾ-ի դրական եզրակացությամբ, որում ներառված են տվյալներ տրամադրված ծառայության և տվյալ ծառայությունից օգտված անձանց անձնական տվյալների մասին, կազմակերպության և շահառուի կամ նրա օրինական ներկայացուցչի միջև կնքված

հանձնման-ընդունման արձանագրությունը, պետական վկայագրի հիման վրա տրամադրված ծառայության կատարողականը:

15. Պետական վկայագրի հիման վրա տրամադրված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է սույն կարգի 14-րդ կետով սահմանված փաստաթղթերն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված և տարեկան հատկացումների կատարման եռամսյակային համամասնություններով նախատեսված միջոցների սահմաններում:

16. Պետական վկայագրի գինը սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով տվյալ ծառայության համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակում մեկ շահառուի համար կատարվող փաստացի ծախսի չափով:

17. Պետական վկայագրի հիման վրա ծառայությունների տրամադրման գործընթացը համակարգում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ